ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆ

ՆՈՐ ՏԵՍԱԿԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 27.03.2020Թ. ԹԻՎ 55-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ պարետի 03.05.2020թ. թիվ 63-Ա որոշման պահանջները,

նկատի ունենալով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի Նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (covid-19) տարածումը կանխելուն ուղղված միջոցառումների մասին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.03.2020թ. թիվ 55-Լ հրամանում **(այսուհետ՝ Հրաման)** փոփոխություն և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը.

1. Հրամանի 3.5 կետում «դիմակների» բառից հետո լրացնել «***և ձեռնոցներ***» բառերը:

2. Հրամանը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.6 և 3.7 կետերով.

«3.6. ապահովել ՀՀ փաստաբանների պալատի շենք, այդ թվում ՀՊԳ գրասենյակ մուտք գործող յուրաքանչյուր քաղաքացու ջերմությունը չափելու և տվյալները հաշվառելու աշխատանքները.

3.7. ՀՀ փաստաբանների պալատի շենքում, այդ թվում նաև հանրային պաշտպանի գրասենյակում ապահովել ՀՀ պարետի 03.05.2020թ. թիվ 63-Ա որոշման պահանջների կատարումը:»:

3. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն հրամանի մասին իրազեկել աշխատակազմին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

04 մայիսի 2020թ.
ք.Երևան
թիվ 63-Լ